

### ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

## ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է դատարանների դերը ժողովրդավարության հաստատման գործում: Վերջինս քննարկվում է առանձին երկրների փորձի հիման վրա՝ առանձնացնելով հետևյալ միջավայրերը. ավտորիտար ռեժիմ, անցումային և կոնսոլիդացված ժողովրդավարություն: Հոդվածի եզրահանգումը այն է, որ դատարանները ժողովրդավարության անցման գործում կարող են հանդես գալ տարբեր դերակատարմամբ՝ անցումային շրջանի կառավարում, ավտորիտար ռեժիմի և քաղաքականության պահպանողի դերի ստանձնում, մոբիլիզացման և ռեժիմի փոփոխության օժանդակություն, մարզինալ դերակատարում, չեզոքություն և այլն:

*Հիմնաբառեր- Դատարան, ժողովրդավարություն, ավտորիտար ռեժիմ, անցումային շրջան, կոնսոլիդացիա:*

Դատական իշխանության դերը անցումային շրջանում և հատկապես ժողովրդավարության հաստատման գործում վերջին ժամանակաշրջանում զգալի ուշադրության և կարևորության է արժանանում, ինչը կապված է պատմական զարգացումների հետ:

Նախ, սահմանադրականությունն ու դատական ստուգումը դարձել են 20-րդ դարի վերջին անցումային ռեժիմների ընդգրկում և բնութագրող հատկանիշը, ինչը իր հերթին մեծացրել է դատական իշխանության դերը նոր զարգացող ժողովրդավարությունում: Այնուհետ, դատարանների դերը ժողովրդավարության կայացման գործում առավել ցայտուն երևում է հետընտրական գործընթացներում, որտեղ դատարանները կարող են օգնել և նպաստել հետընտրական անցմանը դեպի ժողովրդավարություն [1]:

Զարգացող աշխարհում նկատելի է հատկապես երկու կարևոր միտում՝ դատարանաշինություն և ժողովրդավարեցում, որոնք հատվում են որոշակի փուլում[2]: Ասվածը նկատելի է հատկապես այն դեպքում, երբ ուսումնասիրվում է դատարանների դերը ժողովրդավարության հաստատման գործում: Դատարանների դերը իր հերթին, կախված է մի շարք ռազմավարական գործոններից: Ոչ կայուն միջավայրում, օրինակ, դատարանները հայտնվում են ռիսկային վիճակում, սակայն, միևնույն ժամանակ, նրանցից կարող է պահանջվել կարևոր գործառույթների իրականացում՝ հատկապես այն դեպքում, երբ պետության այլ կառույցները թույլ են կամ անարդյունավետ: Նման դեպքերում դատարանները հնարավոր է ավելի շատ ճնշումների հանդիպեն, քան կայուն միջավայրում գտնվող դատական համակարգերը, սակայն առաջինները ավելի մեծ նորարարություն են բերում իրենց հետ:

Հետևաբար, դատարանների դերի մասին լայն

իմաստով խոսելիս, անհրաժեշտ է քննարկել ոչ թե վերացական տեսությունը այն մասին, թե ինչ պետք է դատարանները իրականացնեն, այլ ավելի էմպիրիկ միջավայրում քննարկել այն, թե ինչ դերակատարում են իրականում ունենում դատարանները: Սա հատկապես կարևորվում է անցումային շրջանում գտնվող իրավիճակների համար: Ըստ այդմ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք երկրներում ժողովրդավարության հաստատումը կապված է եղել դատարանաշինության հետ, ինչը ներառել է նոր դատարանների ստեղծումն ու հների իրավասության վերանայումը՝ դատարանների դերի և կարևորության նորացմամբ ու մեծացմամբ:

Նման մոտեցմամբ դատարանների դերը ուսումնասիրության է ենթարկվում մի քանի միջավայրերում՝ *ավտորիտար ռեժիմի պարագայում, անցումային ժողովրդավարություններում և ժողովրդավարության կոնսոլիդացիայի պարագայում:*

Խոսելով ավտորիտար ռեժիմի մասին՝ պետք է նշել, որ մասնագետների մոտ գերիշխել է այն մոտեցումը, ըստ որի՝ դատարանները նման միջավայրում մեծ դեր չեն խաղում[2]: Այս մոտեցումը սակայն ստացել է համապատասխան հակադարձում: Մասնավորապես, ըստ Տրոչկի՝ ավտորիտար համակարգերում իրականում դատարանները հանդես են գալիս ռեժիմին օժանդակող դերով: Ավելի կոնկրետ՝ դատարանների դերը ներկայացվել է հետևյալ կերպ. «Կառավարողները, անկախ ժողովրդավար կամ ավտորիտար բնույթից, ստեղծում և պահում են նոր սահմանադրական դատարաններ, քանի դեռ վերջիններս՝

1. կարևոր դերակատարում են ունենում կառավարողների համար,
2. չեն ներգրավվում հանրային քաղաքակա-

նության մեջ[3]»:

Որպես օրինակ քննարկման է ենթակա Չինաստանի փորձը: Չինաստանը դատական համակարգում ստեղծել է հատուկ ստորաբաժանումներ՝ մտավոր սեփականության պաշտպանությունը բարելավելու նպատակով: Սա իրականացվել է որպես դատական իշխանության բարելավման ընդհանուր քաղաքականության մի մաս՝ այս դեպքում՝ առևտուրն ու ներդրումները հեշտացնելու նպատակով: Այս համատեքստում համակարգը դատարաններին օգտագործել է աշխարհագրական տարածքներում սոցիալական վերահսկողության և տնտեսական զարգացման կարևոր քաղաքականություն իրականացնելու համար[4]:

Մյուս կողմից՝ ավտորիտար համակարգում դատարանների դերի օգտագործման ոչ բոլոր փորձերն են հաջողված համարվում: Վիետնամի տնտեսական դատարանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս չի կայացել որպես վեճերի լուծման արդյունավետ և հեղինակություն վայելող կառույց և մարզինալիզացվում է ինչպես օգտատերերի, այնպես էլ կառավարության կողմից[5]:

Ընդհանուր մոտեցումը, սակայն, հանգում է նրան, որ ավտորիտար համակարգերում դատարանները ծառայում են իշխող ռեժիմի շահերին, նույնիսկ, եթե որոշ համատեքստում դատարանները հեշտացնում են ընդդիմության գործունեությունը:

Այսպես, իշխող ռեժիմի ընդդիմադիրներին դատարանների հասանելիությունը հնարավորություն է տալիս մտածել ավտորիտար երկրներում ժողովրդավարության առաջացման մասին: Սա հնարավոր է երկու հիմնական դերակատարմամբ: Առաջին տեսակի պարագայում դատարանների գործառույթները իրականացվում են մինչ ժողովրդավարության հաստատումը՝ հատկապես անցումային փուլերում: Երկրորդ տեսակի դերակատարումը դրսևորվում է ժողովրդավարության հաստատումից հետո՝ նույնիսկ, եթե այն դեռևս լիարժեք հաստատված չէ:

Որոշ դեպքերում, ինչը հաճախ չի հանդիպում, դատարանները կենտրոնական դեր են զբաղեցնում ժողովրդավարության հաստատման գործում, երբ իշխող ավտորիտար ռեժիմը իշխանության փոխանցման չի ձգտում, սակայն առճակատման մեջ է մտնում ընդդիմության հետ: Նման դեպքերում, դատարանները անցումային շրջանի կենտրոնում են, ինչը բնութագրվում է կոնֆլիկտայնությամբ, միևնույն ժամանակ՝ ժողովրդավարությունը իրավիճակի միակ հնարավոր արդյունքը չէ: Դատական որոշումը նման դեպքում այն առանցքային կետն է, որի շուրջ, օրինակ, կարող են մոբիլիզաց-

վել ակտիվիստները: Սա օժանդակող դերակատարում կարող է ունենալ, քանի որ մի կողմից կօգնի հասարակությանը հասկանալ, թե ինչում է դրսևորվել իշխանության թերացումն ու ինչ օրենք է խախտվել: Մյուս կողմից՝ կնպաստի համախմբվել և համակարգել ռեժիմի ընդդիմադիրների ջանքերը: Հակառակ դեպքում տարակարծությունը կխանգարի ընդդիմադիրների հետագա առաջխաղացմանը: Բացի այդ, իշխող ռեժիմի դեմ կայացվող դատական որոշումը իրենից ներկայացնում է տեղեկատվության փոխանցման միջոց, որով հստակեցվում է իշխող ուժերի ու քաղաքականության թերացումը: Ավելին, դատարանների նման մոտեցումը կարող է խոսել նաև այն մասին, որ վերջիններս չեն վախենում ռեժիմի դեմ որոշում կայացնելուց, ինչը իր հերթին կօգնի ընդդիմադիրներին գնահատել առկա ռիսկերը: Եվ վերջում, նման որոշումները օգնում են ընդդիմադիրներին ու ակտիվիստներին ընդլայնել իրենց շրջանակն ու նոր օժանդակողների ներգրավել, քանզի դատարանները լեգիտիմացնում են ընդդիմությունն ու վստահություն ներշնչում հասարակությանը:

Նման իրավիճակներում հնարավոր է նաև, որ դատարանները «պատժվեն» իշխանության կողմից: Հետևաբար, դատարանների կողմից իշխող ռեժիմի դեմ որոշման կայացում սպասելի է այն դեպքում, երբ վերջիններս ամուր ինստիտուցիոնալ և քաղաքական կապեր ունեն արտաքին ինստիտուտների հետ, որոնք կարող են օգնել դատարաններին: Եվ վերջիններս բավարար վստահություն ունեն, որ կայացվող որոշումները կիրագործվեն: Այս պայմանները, սակայն, պրակտիկայում ոչ միշտ է որ հասանելի են դատարաններին:

Որպես դատարանների կողմից վճռական դերակատարման օրինակ է հանդիսանում 2004-2005 թթ. Ուկրաինայում տեղի ունեցած «Նարնջագույն հեղափոխության» արդյունքում վրա հասած իրավիճակը: Այսպես, այդ ժամանակ նախագահ հանդիսացող Կուչման որոշում էր կայացրել առաջ տանել իր կողմից առաջ քաշված և իրեն փոխարինման պատրաստ Վիկտոր Յանուկովիչի թեկնածությունը: Օգտագործելով տարբեր մեթոդներ, ընդհուպ մինչև ընդդիմադիր թեկնածու Վիկտոր Յուշչենկոյին թունավորելը՝ կառավարությունը կեղծեց 2004 թվականի նոյեմբերին տեղի ունեցած ընտրությունների արդյունքները: Յուշչենկոյի օժանդակողները սակայն հրաժարվեցին ընդունել ընտրության արդյունքները, իսկ Վ. Յուշչենկոն սիմվոլիկ երդմնակալության արարողակարգով հռչակվեց նախագահ: Ավելին, նա տեղական կառավարման մարմիններից ստացավ աջակցության երաշխիքներ: Իսկ ընդդիմության կողմնակիցները

նախաձեռնեցին լայնածավալ բողոքի ակցիաներ և ցույցեր, ինչպես նաև բողոք ներկայացրեցին դատարան՝ փորձելով ընտրության արդյունքները չեղարկել: Ինչ վերաբերում է Խորհրդարանին, ապա վերջինս Յանուկովիչին անվստահություն հայտնեց, ով այդ ժամանակ հանդես էր գալիս երկրի վարչապետի պաշտոնում: 2004 թվականի դեկտեմբերի 3-ին Գերագույն դատարանը իր որոշմամբ վճռական դեր խաղաց քաղաքական ճգնաժամի լուծման հարցում և նոր ընտրություն անցկացնելու որոշում կայացրեց: Երկրորդ անգամ տեղի ունեցած ընտրությունների արդյունքում, ինչը ընթացավ միջազգային կառույցների լուրջ հսկողության ներքո, Յուշչենկոն հաղթանակ տարավ, իսկ Յանուկովիչի դատական բողոքները մնացին անարդյունք: Գերագույն դատարանը, փաստորեն, այդ ընթացքում իշխանության փոփոխության գործընթացի կենտրոնական դերակատարը հանդիսացավ: Դատարանի որոշումը ըստ էության, աջակցեց ընդդիմությանն ու տապալեց իշխող ուժին:

Դատարանը, սակայն, ուղղակիորեն չընտրեց նոր իշխանություն, այլ ներգրավվեց քաղաքական մրցակցության և վերակառուցման մեջ՝ ապահովելով թափանցիկ ընտրություն և հնարավորություն տվեց ընդդիմությանը: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե դատարանները ինչպես կարող են օժանդակել ժողովրդավարության հաստատմանը: Միևնույն ժամանակ, սակայն, որոշ մասնագետներ համոզմունք են արտահայտել, որ դատարանը անկախ գործել է միայն այն բանից հետո, երբ իշխող գերակա ուժերը արդեն հասել էին որոշակի կոնսենսուսի[2]:

Դատարանների դերի և գործունեության առավել լայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական ուժերի և դատարանների միջև առկա է շարունակական փոխգործակցություն: Միևնույն ժամանակ գոյություն ունեն տարբեր պատճառներ, որոնցով պայմանավորված դատարանները ժողովրդավարության հաստատման գործում էական դերակատարում չեն ունենում: Որոշ հազվադեպ դեպքերում դատարանները կայացրած որոշումների շնորհիվ մոբիլիզացնում են ընդդիմադիր ուժերին: Նման դեպքերում դատարանի որոշումն ու իշխող ռեժիմի փոփոխությունը համընկնում են: Միևնույն ժամանակ, դատարանի որոշումները ոչ պարտադիր անհրաժեշտ և ոչ էլ բավարար են ժողովրդավարության անցման համար: Իսկ պատմության ուսումնասիրությունը ապացուցում է, որ նման իրավիճակներ հաճախ չեն պատահում:

Պրակտիկայում առավել հաճախ են հանդիպում դեպքերը, երբ ավտորիտար ռեժիմը փորձում է ոչ թե անժամկետ իշխանության մնալ, այլ սուկ

հեռանալ քաղաքականության մեջ ակտիվ ներգրավվածությունից: Նման իրավիճակները բնորոշ են հեղաշրջումներին կամ այնպիսի ռեժիմին, որը հենվել է կարճաժամկետ իրավիճակի վրա ռեպրեսիվ քաղաքականությունը արդարացնելու համար: Սա կարող է խելամիտ տարբերակ հանդիսանալ այնպիսի իրավիճակների դեպքում, երբ ռեժիմը գիտակցում է հետագա գոյատևման անհնարինությունը: Նման դեպքերում ավտորիտար ռեժիմի խնդիրն է ունենալ որոշակի երաշխիքներ, որ անցումային շրջանից հետո իր քաղաքականությունը ամբողջությամբ չի կործանվի, ինչպես նաև խնդրահարույց կհանդիսանա ռեժիմի աջակիցների ազատության և նյութական իրավունքների պահպանության հարցը:

Եվ ահա նման իրավիճակներում է, որ դատարանները կարող են ավտորիտար ռեժիմի համար դերակատարում ունենալ: Մասնավորապես, դատարանը արհեստականորեն ապահովում է ավտորիտար ռեժիմի դուրս գալը իշխանությունից՝ ապահովելով միապետի քաղաքականության հետագա անվտանգությունը: Նման իրավիճակը չպետք է սակայն դիտարկվի որպես դատարանների կողմից ժողովրդավարության դեմ իրականացվող գործառույթ, քանզի երբեմն այդ գործառույթը կարող է անհրաժեշտ լինել ավտորիտար ռեժիմին իշխանությունից գրկելու համար: Դատարանը այդ դեպքում հիմնականում կոնսերվատիվ դեր է խաղում՝ ապահովելով որոշակի պայմաններ՝ ապագայում հնարավոր բախումների դեմ:

Հարկ է նշել սակայն, որ ներկայացված իրավիճակները բնորոշ են միայն որոշակի անցումային շրջաններին, որտեղ ավտորիտար ռեժիմը ունակ է մշակել խաղի կանոններն ու իշխանությունից դուրս գալու պայմանները: Այստեղ հիմնական եզրակացությունը հետևյալն է՝ դատարանները կարող են ծառայել ժողովրդավարությանը՝ պահպանելով նախորդ միապետի իրավունքները, քանի որ նման ինստիտուցիոնալ երաշխիքները կարող են հանգեցնել առանց հեղափոխության իշխանության հանձնմանը միապետի կողմից:

Որոշ այլ դեպքերում, հաշվի առնելով նաև տիրող ժամանակաքառը, դատարանները կարող են ծառայել *նոր ձևավորված ժողովրդավարության շահերին*՝ անցումային շրջանից հետո կենտրոնական դեր ստանձնելով: Նման դեպքերում ավտորիտար ռեժիմից ժողովրդավարության անցումը ներառում է նաև իրավական համակարգում առկա խոչընդոտների վերացումը: Եվ ահա այստեղ դատարանները կարող են հին և նոր ռեժիմի միջև վիճաբանության կարևոր դերակատար հանդիսանալ և նպաստել անցումային արդարադատության

հաստատմանը: Օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իտալիայում ֆաշիզմի վերացումն ու անցումը անորոշ էր, քանի որ Իտալիան գտնում էր, որ պատերազմը հաղթահարված է, սակայն նոր ինստիտուցիոնալ վերակառուցման միտում չէր նկատվում: Այդ շրջանում է, որ երկրի Սահմանադրական դատարանը ստանձնեց իրավական համակարգը ֆաշիստական ժառանգությունից մաքրելու գործընթացը:

Կարող ենք փաստել, որ մնան իրավիճակներում դատարանները թափանցիկ քաղաքական մրցակցության մթնոլորտ ապահովող հիմնական դերակատարներն են դառնում: Միևնույն ժամանակ, լինում են նաև դեպքեր, երբ դատարանները ոչ թե կենտրոնական դերակատար են հանդիսանում անցումային շրջանում, այլ ներգրավվում են անցումային շրջանից հետո վրա հասնող կոնսոլիդացման փուլին, որտեղ արդեն ապահովվում են տարբեր ինստիտուտների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Սա պրակտիկայում տեղի է ունենում հիմնականում ժողովրդավարության հաստատումից հետո: Որպես արդյունք, երբեմնի պասիվ կառույցները դառնում են առավել ուժեղ, իսկ դատավորները հարմարվում են նոր շրջանին: Քանզի դատական համակարգի կազմը իշխանության փոփոխության հետ նույնպես փոխվում է, հավանականությունը մեծանում է, որ դատարանները ավելի համարձակ կգործեն, ինչը կարող է ուղեկցվել նաև նոր դատարանների ստեղծմամբ:

Հարկ է նշել սակայն, որ սկզբնական շրջանում նոր էլիտան/իշխանությունը կարող է ռեսուրսների պակաս զգալ դատական համակարգը լիովին նորացնելու հարցում, արդյունքում՝ նախորդ ռեժիմի կողմից նշանակված դատական կազմերը կարող են շարունակել գործել, ինչը հնարավոր է ուղեկցվի որոշակի բացասական հետևանքներով:

Պետք է նկատի ունենալ նաև, որ միշտ չէ, որ նոր ինստիտուտներ ստեղծելը առավելություն է բերում: Մի կողմից դատարանները իրենց դերով ու գործառնություններով կարող են հեշտացնել դատարանակազմությանը, մյուս կողմից կարող են ներգրավվել այլ՝ հին դատարանների հետ կոնֆլիկտի մեջ: Դերերի բաշխումը այս պարագայում ենթադրում է, որ տարբեր դատարաններ քաղաքական և իրավական համակարգում տարբեր դեր պետք է ստանձնեն, օրինակ, եթե մի դատարան առանձնակի քաղաքական դեր է ստանձնել, մյուսը պետք է հակառակ դերը ստանձնի: Կոնֆլիկտի ամենից հաճախ հանդիպող օրինակը դրսևորվել է գերագույն և սահմանադրական դատարանների միջև, քանզի նրանցից յուրաքանչյուրը ձգտել է հաստատել և պահպանել իր դերը[6]:

Դատարանների կողմից իրականացվող կոնսոլիդացման մեկ այլ գործառնություն ներառում է անցյալի թողած ժառանգության հետ գործ ունենալը, ինչը հատկապես խնդրահարույց է նոր հաստատված ժողովրդավարության պայմաններում: Այն դեպքում, երբ հին համակարգը ամբողջությամբ վերացված չէ և քաղաքականության մեջ զգալի դեր է պահպանում և անցումային արդարադատությունը բավականին խոչընդոտների է հանդիպում: Մյուս կողմից, եթե նախորդ համակարգը ամբողջությամբ տապալվում է, ապա անցյալի հետ հաշտվելու պայմաններ են առաջ գալիս, ինչը հիմնականում ներառում է դատաիրավական համակարգի ակտիվ գործունեությունը:

Կարող ենք նշել, որ գոյություն ունեն տարբեր դերեր, որոնք իրականացվում են դատարանների կողմից ժողովրդավարության անցման և ժողովրդավարության կոնսոլիդացիայի փուլերում: Վերջինիս ժամանակ, հատկապես երբ դատարանները գործում են ժողովրդավարության հաստատման օգտին, այդ դերն ու իրականացվող գործառնությունները առավել մեծ են: Ըստ այդմ էլ, դատարանների կողմից իրականացվող մի շարք դերեր համընկնում են ժողովրդավարական կառավարման հետ, քանզի դատավորները լրացնում են այլ քաղաքական ինստիտուտների կողմից խաղացող դերերը:

Հոդվածի բովանդակությունից բխող հիմնական եզրահանգումն այն է, որ ժողովրդավարության անցման գործում դատարանները մի քանի կարևոր դերակատարում կարող են ունենալ: Ինչպես պարզ դարձավ վերը ներկայացվածից՝ որոշ դեպքերում դատարանները ստանձնում են ապագայի գլխավոր դերակատարումը՝ օգնելով ժողովրդավարության կոնսոլիդացիային: Որոշ, առավել քիչ հանդիպող դեպքերում, դատարանները իրենք են դրդում ժողովրդավարության անցումը՝ խրախուսելով մոբիլիզացիան և ռեժիմի փոփոխությունը: Եվ վերջապես, դատարանները կարող են պարզապես ստանձնել մարզինալ խաղացողի դերը և չեզոք մնալ՝ առանց նպաստելու կամ խաթարելու ժողովրդավարության անցումը: Այս ամենը, իհարկե, կախված է ինչպես տիրող ընդհանուր իրավիճակից ու միջավայրից, այնպես էլ տվյալ երկրի ինստիտուցիոնալ կառուցվածքից և դատարանների ու դատավորների կարողություններից:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱԳՐՅՈՒՐՆԵՐ

1. Johanna Kalb, The Judicial Role in New Democracies: A Strategic Account of Comparative Citation, Yale Journal of International Law, Volume 38, 2013
2. Tom Ginsburg, Courts and New Democracies: Recent Works, The Law School, University of Chicago, June 2012
3. Trochev, Alexei. Forthcoming. Fragmentation? Defection? Legitimacy? Explaining Judicial Behavior in Post-Communist “Colored Revolutions.” In Consequential Courts, edited by Diana Kapisziewski et al. New York: Cambridge University Press.
4. Connie Carter. Specialized Intellectual Property Courts in the People’s Republic of China: Myth or Reality? In New Courts in Asia, ed. Andrew Harding and Penelope Nicholson, . New York: Routledge, 2011
5. Penelope Nicholson, borrowing court systems: the experience of socialist Vietnam, (London-Leiden Series on Law, Administration and Development) Brill Academic Publishers, 2007
6. Trochev, Alexei. 2008 Judging Russia: Constitutional Court in Russian Politics 1990–2006. New York: Cambridge University Press.

Ասմիկ Արուտյոյան

Соискатель Академии государственного управления РА

## РЕЗЮМЕ

*Роль судов в установлении демократии*

В статье представлены примеры роли судов в установлении демократии. Последние обсуждаются на основе опыта отдельных стран, отделяя следующие среды; авторитарного режима, переходных и консолидированных демократий. Вывод этой статьи состоит в том, что суды могут играть определенную роль в процессе перехода к демократии через различные роли; переходное управление, авторитарные режимы и директивные органы, мобилизацию и помощь в изменении режима, маргинальную роль и нейтралитет.

*Ключевые слова:* суды, демократия, авторитарный режим, переходный период, консолидация.

Hasmik Harutyunyan

Applicant of the Public Administration Academy  
of the Republic of Armenia

## SUMMARY

*The role of courts in establishing democracy*

The article presents examples of the role of courts in establishing democracy. The latter are being discussed on the basis of the experience of individual countries, separating the following environments: authoritarian regime, transitional and consolidated democracies. The conclusion of the article is that the courts can play a role in the transition to democracy through different roles, transitional governance, authoritarian regimes and policymakers, mobilization and regime change assistance, marginal role and neutrality.

*Key words:* courts, democracy, authoritarian regime, transitional period, consolidation.